

Միայն ճրգնած շարաչար,  
Ո՞վ նահատակ, քեզ եղուկ  
Որ չըտեսած փառք մ'անձառ՝  
Կորուսիր կեանքդ յեղյեղուկ:  
Այլ եղայր, ո՞չ, այդպէս ո՞չ.  
Այն հայրենիքն՝ ում համար  
Զոհեցիր կեանքըդ բողոք՝  
Պիտ' օրհնէ զբեզ անդադար,  
Պիտի կանգնէ յուշարձան  
Խւր ճակատին իսկ վըրայ,  
Ուր պիտ' ապրիս դոն անձայն  
Անմահութեան զիրգ վըկայ...  
Խորան մ'իրենց սրբտին մէջ  
Բանան բոլոր սիրելիք,  
Ուր իրեն մոմ՝ սէրն անշէջ՝  
Փոխէ երկիրը երկինք:  
Հ. ԳՐՍ. ԱՅՏԸՆԵԱՆՑ

Ա. Զենոն զիւղ (Անեստիկ)  
8/21 Անպատճեր 1914

## ՀԱՅԻ ԴԵՒՇՆԻ ԱԼԻՇԱՆ

ԽԲՔԻ ՔԵՐԹՈՂ,



### ԷՆԹԵՐՉՈՒՆԱՄՆԵՐ

I.

« ԱՐԻՍԻՒ » Ը

(Տես Նուազը. Հասոր Բ.  
Երգը. Հանգըւանաց. թ.)

Հայր Ղեռնդ Ալիշանի քնարին վրայ՝  
հայրենաշունչ լարին հետ կայ նաև բնութեան զեղեցկութիւնները երգող լար մը  
ընթրյշ ու խորապէս թրթոռն: Բնութիւնը,  
մեծ քերթողին համար, ազդիւր մըն է՝  
որոն ականակիս ջուրը չի ցամքիր, լեցուն է արենվ ու պայծառութեամբ, և  
որուն կը դիմն հերարձակ ու զիսախորւ պատուածները հզրագոյն Արուեստին: Այդ աղբիւրը լոյսի ազրիւն է, ազրիւրը  
կեանքին ու մտածման, երգիչը մեծ խորհող մըն է քնութեան առջև՝ ուր ծնրադիր կը խոնարհի պաշտամունքով և իր հո-

գին կը դողայ խունկի ու միսթից զգացութերու զինովութեամբ:  
Բնազանցութեան մէջ կարծես իր մտածումը կ'ապրի լոյսին խելայեղ թուրչէն յոգնած, և զգացումները իրենց խորունկ անուշութիւնը պահելով մէկտեղ, կը թուին իսկականներ՝ ուր քերթողին ինքնատպութիւնը ոչ մէկ բանով կը խաթարուի:  
Կարդանց « Լուսին » ը գաղափար մը կազմելու համար իր վրայ.

« Բըլուրը փթթեալը, ամպածըրար գագաթունք,  
« Ոինց դալարից, և անմահին և զեղջտունք,  
« Դաշտ և հովիտ և ստուերամած կայարան,  
« Խոխով առուաց, սոխակն յոստոց բազմարան,  
« Խընդրեն ըզլուսին  
« Լապտեր զիշերին: »

Թերեւս զիշեր մը նստաւ ան իր վանկանի պարզ խցիկի պատուհանին առջև, զիտեց Աղրիականը՝ լուսավառ հայելիի մը նման հանդարտ, զիշերուան թագուհին դէմքը ցուացնող: Ալրաը դողաց, քնարը հնչեց: Ամածեց որ անլուսին զիշերները զեղեցիկ չեն, իրերը անոր հահար շունչ առին, զգացում, զեղեցկութեան կարօտ և ուզեցին որ լուսինէն շող մը սահի իրենց վրայ:

Ի՞նչ է արդէն բանաստեղծի մը հոգին, անհուն աշխարհ մը՝ ուր առարկաները կեանց ունին և ուր լուսիթիւնը կարծես նուագ մըն է խորապէս ցաղցր: Ահա թէ ինչ կ'ըսէ Լամարթին,

« Objets inanimés, avez-vous donc une âme  
Qui s'attache à notre âme et la force d'aimer? »  
(Milly ou la terre natale).

Բլուրները, լեռներու ամպածըրար գագթներ, եկեղեցիները, զեղջկական տու-

ները, զաշտն ու հովիսը, առուակին կար-  
կաչը, սոխակը, երգչի զգայուն սրտով

« Խնդրեն ըզլուսին  
« Լապտե՛ր գիշերին։ »

Աւրիշ իրեր պիտի օրհնեն զայն, լու-  
սինը, իրբու զիշերուան գոհար, բայց կար-  
դանը երկրորդ տունը՝ որ առաջուանին  
պէս գեղեցիկ է,

« Ժայռը անդեղեայք, ծործորք, նոճիք  
երկնածեմք,  
« Խճճ անկենդանի, շարք պուրակաց դէմ  
ընդէմք,  
« Ինդ գընայուն անապատին անեզեր,  
« Էւ նոր կապոյտ գընդիցն հրոսակ մըշ-  
տերեր,  
« (Օրհնեն ըզլուսին  
« Գոհար զիշերին։ »

Իրերը բանաստեղծին հոգին է որ  
կ'առնեն շունչ, զող և հրապոյր: — Երկ-  
նածեմ նոճիներ, ինչ զեղեցիկ են անոնց  
և ինչքան ալ տիտուր լցուած զերեզման-  
ներու վրայ: Քերթողին մտածումը դառ-  
ութիւն մ'ունի, թերևս անոր հոգին լե-  
ցուն է շիրմական յուշըերով: Երբ կար-  
դանը ամրողապէս « Լուսին »ը, պիտի  
նկատենը որ սոյն քերթուածը շատ յա-  
ջողուած է: Հոն իրարու մէջ և իրարմով  
ներդաշնակութիւն մը կը կազմեն կեանցի,  
սիրոյ ու մահուան զաղափարներ:

Եարունակե՞նք մեր ընթերցումը:

« Ինդ ձիւնալեառն անցորդին հետք թաք-  
թաքուր,  
« Մովաշայեաց հիւղ, ձըկնորսին սահուն  
կուր,  
« Աչք տըքնասէր որդեկորոյս ծընողաց,  
« Միւրք իմաստոնց՝ խուզակը ընութեան  
ու եթերաց՝

« Գովեն ըզլուսին  
« Ըբքիք գիշերին։ »

Սոյն տունին մէջ նկատեցէր պարզ  
իրէն դէպի վսեմին հասնիլը: Առաջինը

հետք մէն է միայն, երկրորդը հիւղ մը,  
երրորդը մանկոյի մը, յետոյ աշը մը ու  
վերջապէս մտածումը՝ որ զերազոյն է և  
աստուածային:

Անցնինք չորորդ տունին:

« Պըսակ մըթոյն ըզլեզ՝ արփին ուղփահեմ՝  
« Բզզեզ սիրեմ և ես, զըմիսոյ եռաղեմ,  
« Եւ յաստեղ բոյլս ըսպայագունդ գօրա-  
պետ

« Եւ յօրիորդս ես թագուհի լուսազգեստ,  
« Չըքնաղըդ լուսին  
« Պարծանց զիշերին։ »

Լուսինը զիշերուան աշքն է և անոր  
պարծանըը, ինչպէս արկը տուընջեան: Ո՞ր  
բանաստեղծը զայն չէ սիրած: Լա-  
մարթին կը հարցընէ անոր, երբ իր մտա-  
ծումը մեռելներու հանգիստը կը վրդովէ,

« Je songe à ceux qui ne sont plus:  
« Douce lumière, es-tu leur âme?»

(Le Soir)

Անուշիկ լոյս, դողոջուն և արծաթա-  
շող, որ մեղմուէն կը ծաւալի ջուրերու  
հանդարտ ծփանցին մէջ, երբ զիշերը իր  
աստեղազարդ վերարկուին տակ՝ կը թա-  
փափի կամացուկ, ու տերմները կը փսփսան  
անոր անունն,

« Միրոյ Գեղեցկութիւն։ »

Ո՞ր բանաստեղծին սիրաը չէ լեցուած  
դառնագին յիշատակներով, երբ ան հո-  
րիցնէն կը բարձրանայ նախ ոսկեգոյն,  
յետոյ արծաթավառ ու խոշոր ափսէի մը  
պէս:

« Միերթ և մեկնակ ընդ ովկիանն օդաւոր  
« թանշարժ կոհակս ի տիպ նաւու գոգա-  
ւոր՝

« Ու նաւակայս՝ ուր ի մեր գունտ չիք  
նըշմար՝

« Թուղթեակ թացուն ծովաչըւես անվը-  
թար,

« Պայծառը լուսին

« Ուզեակ զիշերին: »

« Ի՞ն, թէ եցես դու ի ծովէ յերեկոյն,  
« Լեռնակուտակ թէ յանտառաց առջնա-  
գոյն,

« Ի ծաւալել հանուրց ըզէս ոսկեհեր,  
« ՄՇ զիմ լուսանցս ի ճաճանչից քոց  
զրկեր,

« Աննրման լուսին

« Հոգի զիշերին... »

Գիշերուան հոգին, որուն լոյսէն փայ-  
փայուիլ կը տենջան քերթողին յոզնած  
աշքերը: Իրիկունը, երբ որորներու թե-  
թեանցիկ խումբը կ'անհետի ալիքներէ  
ծեծուած ժայռերոն վրայ, կը բարձրանայ  
լուսինը իր ոսկէի ծամերը փոելով ծովուն  
հանդարտ ջուրին մէջ: Թագուի մըն է  
կարծես ան՝ որ կու զայ խաղալ ջուրերու  
ծփանցին հետ՝ տերևներու ստուերին մէ-  
ջէն արծաթէ սափորներ պարպելով: Անոր  
լոյսին մէջ եղնիկը իր ջուրին հետ կը  
խաղայ ականակիտ աղքիւրի մը ցովիկը,  
ու խոտերու թաւշանման գորգին վրայ  
զուարթ օրիորդներու պարը զիշերուան  
հոգին կը լեցնէ կախարդանքով:

Խնդրանք մը աղաչանքի մը պէս կը  
բղիփ քերթողին վշտահար սրտէն: Գիշե-  
րային լուսիթինը կ'ամփոփէ անոր հոգին,  
երազները, հին, անցած զնացած օրերու,  
կը վերածնին, յոյսերը, մոխիրի մէջ թա-  
զուած կայծեր, պահ մը կը ցոլան, բայց  
մահը ամենազօրաւորն է տիեզերական ու-  
ժերուն, մահը անոր առջև կը բանայ  
ճամբան՝ ուրկէ գացողները չեն վերա-  
զառնար:

« Այլ մի՛ և զվայրն ինձ անմոռաց մո-  
ռանաս,

« Որոյ բնակչաց չհարու արևն այլ բո-  
պաս...

« Ե՛րթ ի տապանս՝ ուր սիրավար բերի  
սիրտ,

« Դողալ բախիլ վերայ սըրտից անխըլիրա,  
Եւ անդր երթ լուսին,  
« Փարո՞ս դամբանին: »

Դնա՛ հոն՝ ուր շիրիմներ կան լըռուած  
կամ անծանօթ, լոյս տո՞ւր անոնց, փա-  
րո՞ս, զիշերուան հոգի, աննման լուսին...

Քերթողը մեռած է, հսկայ քերթողը  
Հայոց Հայրենիքին՝ որուն սիրուն եղա-  
ան, վիրազեղ ու թրթուռն սիրտը: Դա-  
րեր կ'անցնին. սերունդները կը յաջոր-  
դեն իրարու, ժողովուրդները կ'անհե-  
տանան, բայց կ'ապլին ոսկետառ խօս-  
քերը՝ որոնց ոյժը Տիեզերիքին կը պատ-  
կանի և համայն մարդկութեան: Հայր  
Ղեռնդ Ալիշան Ռոգի մըն է ու ոդին հան-  
ճարն է միայն:

Կը խորհիմ թէ մեր խօսքերը պատ-  
ճառ եղան լոկ նուազեցնելու այն քեր-  
թուածին ոյժը, կը խնդրեմ ընթերցողէն  
անգամ մըն ալ կարդալ: Խորհրդածու-  
թիւնները շատ անգամ ձանձրանալի են,  
փնտռենց միայն մեր մէջ, մեր սրտին մէջ  
մանաւանդ գեղեցիկին ու ներդաշնակու-  
թեան զգացումը, ինչ որ ուրիշները կ'ը-  
սեն, ինչ որ մենք ըսինք, երկուորդական  
են: Անհրաժեշտը ունենալն է ինցնատպու-  
թիւն դատելու և գնահատելու մէջ:

« Ընթերցութեր Հայր Անոնդ Ալիշանը »  
(Անտեպ) - Ա. Գլուխ.

ԱՐՄԵՆ-ԵՐԻԱՅԹ

## PRO PATRIA

Հայրենիքի փառքին համար ոսկեղէն  
թուոր անոնք՝ որ մեռան,

Հըպարտ կեանքեր, Ազատութեան օրօրան,  
Զայն պիտի տան անհետացած զարերէն  
իրենց անկեղծ պարզութեան մէջ տակալին,  
Զըւարթ, ինչպէս ճառազայթներն արկին:

Անոնց վրսեմ, մեղմ անուններն անմոռաց

Պիտի հնչեն ամեն տեղ  
Գարուններու զաշնակութեամբ սիրազեղ,  
Եւ լեցնելով սիրտերը մեր զիւրազգած՝  
Վերածնող երազներով Անցեալին՝  
Ոլոնց համար Ալշալոյներ՝ կը բացուին...